ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2018 թվականի հունիսի 29-ի նիստի N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- 2018-2019 ուսումնական տարվանից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի միջին մասնագիտական կրթական բոլոր ծրագրերով ուսման վարձի չափերը սահմանելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան**:

Զեկուցողը նշեց. համալսարանի գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստի (արձանագրություն N 5) որոշմամբ 2018-2019 ուսումնական տարվանից ֆինանսատնտեսագիտական քոլեջի միջին մասնագիտական կրթական բոլոր ծրագրերով ուսման վարձի չափը սահմանվել է 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջին 1 (մեկ) ուսանողի համար տրամադրվող 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարը: Այսօր, ելնելով իրավիճակից, առաջարկվում է ուսման վարձի չափերը հնարավորության դեպքում նվազեցնել և դրանք սահմանել ըստ մասնագիտությունների (քոլեջի տնօրինական խորհրդի՝ 2018 թվականի հունիսի 13-ի նիստի N 6 արձանագրությունը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Կ.Լ.Աթոյանը, դոցենտ Ս.Ս.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի տնօրինական խորհրդի՝ 2018 թվականի հունիսի 13-ի նիստի որոշումը՝ 2018-2019 ուսումնական տարվանից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի միջին մասնագիտական կրթական բոլոր ծրագրերի համար, ըստ մասնագիտությունների, սահմանել ուսման վարձի հետևյալ չափերը.

1. «Ապահովագրական գործ» և «Մենեջմենթ» մասնագիտական խմբերի 1 (մեկ) ուսանողի համար՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ.
2. «Ֆինանսներ», «Բանկային գործ», «Հաշվապահական հաշվառում» մասնագիտական խմբերի 1 (մեկ) ուսանողի համար՝ 220.000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. Հունիսի 29
Երևան